Հավելված N 2
ՀՀ կառավարության 2023 թվականի
մարտի 30-ի N 451 - Ն որոշման

QR (ԱՐԱԳ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ) ԿՈԴԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՄԻՋՈՑՈՎ ԱՐՏԱՑՈԼՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ

1. Սույն կարգով կարգավորվում են տնտեսավարող սուբյեկտների (ըստ հասցեների) չափագիտության բնագավառում իրենց մոտ իրականացված նախորդ ստուգումների ժամկետների, արդյունքների մասին տեղեկատվություն պարունակող QR (արագ արձագանքման) կոդը (այսուհետ՝ կոդ), կոդին ներկայացվող պահանջները և դրանց միջոցով արտացոլվող տեղեկատվության ձևը:

2. Տնտեսավարող սուբյեկտները (ըստ հասցեների) պարտավոր են ունենալ կոդ:

3. Կոդը մեքենայական ընթերցվող օպտիկական պիտակ է, որը պարունակում է տնտեսավարող սուբյեկտի մոտ իրականացված նախորդ ստուգումների վերաբերյալ ամբողջական տեղեկություններ:

4. Կոդը բաղկացած է սպիտակ ֆոնի վրա քառակուսի ցանցի մեջ տեղադրված սև քառակուսիներից, որը կարելի է կարդալ համապատասխան բջջային սարքի միջոցով:

5. Կոդի փիքսելը կազմում է 21×21:

6. Կոդն օգտագործում է կոդավորման թվային ռեժիմ, որը պարունակում է 3 նիշ, 10 բիթ:

7. Կոդը պարունակում է 25 սիմվոլ և 4 մոդուլ:

8. Կոդի ճանաչումն իրականացվում է սկանավորման միջոցով:

9. Կոդի միջոցով հնարավոր է իրականացնել ստուգում (հղվում է տնտեսավարող սուբյեկտի տվյալներով էջ) և այն կարող է իրականացնել յուրաքանչյուր ոք:

10. Կոդի միջոցով ստուգելիս իրականացվում է վերաուղղորդում տվյալ տնտեսավարող սուբյեկտի վերաբերյալ տեղեկատվությունը ցուցադրող էջ, որը ներառում է հետևյալը՝

1) տնտեսավարող սուբյեկտի անվանումը.

2) գործունեության հասցեն.

3) ՀՎՀՀ.

4) առնվազն վերջին 2 տարիների ստուգումների ժամկետները.

5) առնվազն վերջին 2 տարիների ստուգումների արդյունքները:

11. Սույն կարգի 10-րդ կետով նախատեսված տեղեկատվությունը, ըստ անհրաժեշտության, թարմացվում է տեսչական մարմնի կողմից:

12. Կոդը տնտեսավարող սուբյեկտին տրամադրվում է տեսչական մարմնի ղեկավարի կողմից սահմանված կարգով:

13. Կոդը տեղադրվում է լիցքավորման բաշխիչ աշտարակների կամ վառելիքաբաշխիչ սարքավորումների վրա՝ ընթեռնելի և վարորդին տեսանելի հատվածում:

14. Տեսչական մարմինը տրամադրված կոդերի վերաբերյալ վարում է գրանցամատյան, որի վարման կարգը սահմանում է տեսչական մարմնի ղեկավարը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

31.03.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ